ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մայիսի 23-ին՝ հինգշաբթի.—Խ or Յինանց: Համբարձումն Քրիստոսի.

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը և քարոզեց «Համբարձաւ Տէրն մեր յերկինս» բնաբանով։

Հավարտ ս. պատարագի կատարվեց մաղթանք՝ հայրապետական Աթոռի Սսից ս. էջմիածին փոխադրության հիշատակին, հանդիսադրությամբ գեր. տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանի։

*
* *

Մայիսի 25-ին՝ շաբաթ.—*Ռուս եկեղեցու պատրիարքարանի հրավերով Մայր Աթոռից Մոսկվա մեկնեց հայ եկեղեցու պատվիրակությունը՝ գլխավորությամբ գեր. տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանի, մասնակցելու համար ռուս պրավոսլավ եկեղեցու պատրիարքական Աթոռի վերահաստատման հիսնամյակի տոնակատարություններին։ Հայ եկեղեցու պատվիրակության մյուս անդամները էին՝ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ գեր. տ. Պարգև եպս. Գևորգյանը և ս. Գեղարդի վանքի վանահայր հոգ. տ. Նարեկ վրդ. Շաբարյանը։*

Մեկ շաբաթ Մոսկվայում մնալուց և տոնակատարություններին մասնակցելուց հետո, հունիսի 3-ին, երկուշաբթի օրը, հայ եկեղեցու պատվիրակությունը վերադարձավ Մայր Աթոռ։

*
* *

Մայիսի 26-ին՝ կիրակի.—Է կիր.: Երկրորդ Մաղկազարդ.

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը և քարոզեց «Մեծահրաշ այս խորհուրդ աւանդութեամբ առ մեզ հասեալ» բնաբանով։

*
* *

Հունիսի 1-ին՝ շաբաթ.—*Հոգեգալստյան ս. պատարագ մատուցելու նպատակով գեր. տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, իրեն ուղեկից ունենալով բարեշ. Գրիգոր սրկ. Բունիաթյանին, Մայր Աթոռից մեկնեց Լենինական։ Գեր. սրբազանը կիրակի օրը, հունիսի 2-ին, ի ներկայություն հոծ բազմության, Լենինականի ս. Աստվածածին առաջնորդանիստ եկեղեցում մատուցեց ս. պատարագ և քարոզեց «Զի եթէ ես ոչ երթայց, Մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ. ապա եթէ երթամ, առաքեցից զնա առ ձեզ» բնաբանով։*

Երկուշաբթի օրը, հունիսի 3-ին, տ. Հուսիկ եպիսկոպոսը վերադարձավ Մայր Աթոռ։

*
* *

Հունիսի 2-ին՝ կիրակի.—Հոգեգալուստ (Պենտեկոստէ, յիսներորդ or ի զատկէն).

Մայր տաճարում պատարագեց և քարոզեց հոգ. տ. Արսեն վրդ. Բերբերյանը։

*
* *

Հունիսի 9-ին՝ կիրակի.—Ա. կիր. Զկնի հոգեգալստեան: Սկիզբն Յառուբեան կիրակէից: Յիշատակ Եղիայի մարգարէին.

Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Հովհաննես քհն. Մարուքյանը։

*
* *

Հունիսի 10-ին՝ երկուշաբթի.—Տօն Սրբոց կուսանացն Հռիփսիմեանց.

Ս. Հռիփսիմեի վանքում պատարագեց վանքի վանահայր հոգ. տ. Պողոս վր. Նշանյանը։ Քարոզեց գեր. տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը։

*
* *

Հունիսի 11-ին՝ երեքշաբթի.—Տօն Սրբոց կուսանացն Գայիանեանց.

Ս. Գայանեի վանքում պատարագեց արժ. տ. Նշան քհն. Բեյլերյանը։ Քարոզեց հոգ. տ. Գէորգ վրդ. Սերայդարյանը՝ «Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի» բնաբանով։

*
* *

Հունիսի 13-ին՝ Հինգշաբթի.—Տօն Սրբոյն Յովհաննու Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին.

Ս. Շողակաթի վանքում պատարագեց արժ. տ. Հակոբ քհն. Հակոբյանը։

*
* *

Հունիսի 15-ին՝ շաբաթ.—Տօն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մեռոյ ելն ի վիրապէն.

Մայր տաճարում, Իշման ս. սեղանի վրա, պատարագեց հոգ. տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը։

*
* *

Հունիսի 16-ին՝ կիրակի.—Բ. կիր. Զկնի Հոգեգալստեան։ Տօն կաթուղիկէ ս. Էջմիածնի.

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Գէորգ վրդ. Սերայդարյանը։ Քարոզեց գեր. տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը։

Հավարտ ս. պատարագի կատարվեց մաղթանք՝ հանդիսադրութիւամբ գեր. տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանի։

*
* *

Հունիսի 18-ին՝ երեքշաբթի.—*Լոնդոնի ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ հոգ. տ. Արսեն վրդ. Բերբերյանը շուրջ երկու ամսվա արձակուրդով Մայր Աթոռում մնալուց հետո մեկնեց իր պաշտոնատեղին։*

*
* *

Հունիսի 23-ին՝ կիրակի.—Դ. կիր. Զկնի Հոգեգալստեան.

Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Հակոբ քհն. Հակոբյանը։